

ութեամբ պաշտպանեց մերթ Լատինաց և մերթ Յունաց դէմ, և յաջողեցաւ Լատինաց արգելուլ մեր ազգային սեփականութիւնն եղող Գլխագրի խորանին վերայ պատարագել:

« Հոգելոյս Սրբազանն Երուսաղիմայ պարտուց բարձման համար 1882-ին մայրաքաղաքս եկաւ, և 2—3 տարի ի զուր թափառելէ յետոյ, հիւանդացաւ և այս վիճակին մէջ էր որ Երուսաղէմ վերադարձաւ, երբ Ամեն. Յարութիւն Սրբազան Կ. Պօլսոյ Պատրիարք ընտրուեցաւ:

« Եսայի Սրբազան 21 տարի Պատրիարքական պաշտօն վարելէ և վանուց մէջ ազգի ազգի բարւոքումներ մոռնանելէ յետոյ, վախճանեցաւ առանց մի մեծագոյն փափագանաց արժանանալու, այն է՝ Ս. Յակոբայ վանուց մեծաքանակ պարտուց բարձումը սեսնելու, որուն համար այնքան աքնեցաւ: »

(Լոյս)

Ըստ սոյորութեան՝ անցեալ Սեպտեմբեր ամսին Ս. Գէորգայ տօնի օրը կատարուեց Մայր Աթոռոյս ձեմարանի բացման 11-րդ տարեգարձը:

Ս. պատարագից յետոյ Մայր Աթոռոյս միաբանութիւնը ըստ իւրաքանչիւր աստիճանի եկեղեցական սպասուք թափօրով ուղղուեց դէպ ի ձեմարան՝ Աթոռոյս արտաքին՝ դէպ ի գիւղը տանող դարպասից: ձեմարանի աշակերտք զոյգ զոյգ յառաջընթաց էին թափօրին, նոցա հեռուումէին երգեցիկներ խօսմբը՝ « Քաջամարտիկ » շարականը երգելով: Թափօրը կանգ առաւ ձեմարանի հիւսիսային դրան առաջ, ուր Հանգուցեալ ի Տէր Գէորգ Գ. Կաթողիկոսին հոգեհանգիստ կատարելուց յետոյ, սկսուեց զպրոցական հանդէսը, իսկ հոգեւորական գասը և վաղարշապատու առաջաորք կիսաբողոքակ շրջանով նստեցին իրանց յատկացեալ աթոռների վերայ՝ յաջմէ և յահեկէ Ամենապատիւ Տեղակալ Մկրտիչ Սրբազան Հօր: Գպրոցական հանդէսը բացուեց նորին Ամենապատիւ Սրբազնութեան հրամանաւ Արժ. Յուսիկ վարդապետի բերանացի ատենաբանութեամբ, որից յետոյ մէջ ընդ մէջ երգեցողութեամբ ի կողմանէ աշակերտաց երկու ուսանողներ ճառեր կարդացին: Ապա ձեմարանի Տեսուչ Մեծ. Պ. Նիկողայոս Խորովեան կարդաց ձեմարանի 1884/5 ուսումնական շրջանի

տեղեկագիրը, որ ամսալստագէս կրդնենք ամսագրոյս հետեւեալ
ամսատետրակում ի գիտութիւն ընթերցողոց:

ՎԵՀԱՓԱՌՍ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏՓԻՒՍՈՒՄՆ.

(ՏՔԷԷԷ ԼԵՒԷՆԷՆԵՆԵՆ).

Ամսոյս 11-ին, ուրբաթ օրը, Թիֆլիսի հայոց եկեղեցիների
անընդհատ զանգահարութիւնը իմաց տուեց քաղաքի ազգաբնա-
կութեանը նորահաստատ Վեհափառ կաթողիկոսի մօտալուտ
գալուտը: Առաւօտեան 10 ժամից արդէն, այն փողոցները, ուր
տեղից պէտք է անցնէր Հայրապետը, զարգարուած էին գորգե-
րով: Հանդիսատեսների բազմութիւնը, որոնց մէջ բազմաթիւ օ-
տարականներ էին նկատուում, ժողովուած էր այդ փողոցների
երկու կողմը, և տների լուսամուտներում: Տասն և մէկ ժամին
երկաթուղու առանձին գնացքը բերեց Նորին Վեհափառութեանը
Թիֆլիսի կայարանը, ուր Նորան գիմուորեցին՝ թեմիս Արքազան
Առաջնորդը, քաղաքագլուխը և մօտ 16 իրաւասու, Թիֆլիսի
փոխ-նահանգապետը, ստիկանապետը և այլ սրտուաւոր ան-
ձինք: Երկաթուղու կայարանից Նորին Վեհափառութիւնը քա-
ռածի կառքով մտաւ քաղաք: Հայրապետական կառքի առաջից
գնում էր մի խումբ ժանդարմների, իսկ յետեւից ընթանում էին
կառավարչապետի թիկնապահ ձիաւորները: Կուր գետի աջ կողմը,
Միքայէլեան կամուրջի ծայրին, Նորին Վեհափառութեան դիմա-
ւորեց հոգեւորականաց դասը զգեստաւորուած, հոգեւոր երգասա-
ցութեամբ և առանձին իմն ծիսակատարութեամբ: Այնուհետեւ
հոգեւոր թափօրը համրաբայլ յառաջ ընթացաւ դէպի Վանաց
Մայր-եկեղեցին: Կամուրջից մինչև եկեղեցին, փողոցի աջ և ձախ
կողմը, կանգնեցրած էին քաղաքի արհեստաւորաց դասակար-
գերը (համբարները) իրանց գրօշակներով: Ամպհտանին, որի տակ
ընթանում էր Նորին Վեհափառութիւնը, բռնած ունէին չորս
հայազգի ասիճանաւոր, Նորին Վեհափառութեան թեւակցում
էին՝ Ղարաբաղու Առաջնորդ Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանը,
Սինօղի անգամ Յովակիմ եպիսկոպոսը, Ղարապ Առաջնորդ Գրի-
գորիս եպիսկոպոսը և Հախպատու վանահայր Վարդան արքեպիս-
կոպոսը: Կարգապահութիւնը կատարեալ էր: